ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

6 մայիսի 2011թ. **N -------- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ԹԻՎ 4 ԲՈՒԺՍԱՆՄԱՍ» ԵՎ «ԹԻՎ 13 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻԱՑՄԱՆ ՁԵՎՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ, 20-րդ հոդվածների, 67-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի և 68-րդ հոդվածի 8-րդ մասի և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի դրույթները՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. «Թիվ 4 բուժսանմաս» փակ բաժնետիրական ընկերությունը միացման ձևով վերակազմակերպել՝ միացնելով «Թիվ 13 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը։

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սահմանված կարգին համապատասխան ապահովել «Թիվ 4 բուժսանմաս» փակ բաժնետիրական ընկերության միացման պայմանագրի, փոխանցման ակտի կազմման և հաստատման աշխատանքների կատարումը և նախապատրաստել «Թիվ 13 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության, կառուցվածքի, աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի նախագծերը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն ու հաստատմանը ներկայացնելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԹԻՎ 4 ԲՈՒԺՍԱՆՄԱՍ» ԵՎ «ԹԻՎ 13 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻԱՑՄԱՆ ՁԵՎՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Թիվ 4 բուժսանմաս» և «Թիվ 13 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունները միացման ձևով վերակազմակերպելու մասին» որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ներքոհիշյալով.

«Թիվ 4 բուժսանմաս» ՓԲԸ ձևավորվել է «Նաիրիտ» ԳԱ ՓԲԸ-ի և Շենգավիթ համայնքի /նախկին Լենինյան շրջան/ տարածքում գործող գործարանների աշխատակիցներին պրոֆքննություններ իրականացնելու համար։

ՀՀ անկախացումից հետո գործարանների մեծ մասը դադարեցրեց իր գործունեությունը, բուժսանմասի հետագա աշխատանքները շարունակելու համար Երևանի քաղաքապետի համապատասխան որոշմամբ ամբուլատոր-պոլիկլինիկական սպասարկման համար կցագրվել է թվով 4200 ազգաբնակչություն /2 թերապևտի տեղամաս/։

«Թիվ 4 բուժսանմաս» ՓԲԸ-ն ի սկզբանե իր գործունեությունն իրականացրել է «Նաիրիտ» ԳԱ ՓԲԸ-ի հաշվեկշռում ներառված Թամանցիների 58 հասցեում գտնվող շենքում։ Շենքն ընկերության հաշվեկշիռ ընդգրկելու համար կայացել է ՀՀ կառավարության 12.09.2001թ. հ.841, 06.05.2004թ. հ.667-Ն և Երևանի քաղաքապետի 25.03.2001թ. հ.261 որոշումները, որոնք տարբեր պատճառներով չեն իրականացվել։

«Նաիրիտ» ԳԱ ՓԲԸ-ի տնօրինության կողմից վերջնաժամկետ է ներկայացվել ընկերությանը՝ մինչև 01.01.2011թ. ազատել առանց իրավական հիմքի զբաղեցրած տարածքը, Երևանի քաղաքապետարանի կողմից պայմանավորվածություն է ձեռք բերվել տարածքն ազատել մինչև 2011թ. հունիս ամիսը։

Հարկ ենք համարում նշել նաև, որ սպասարկվող ազգաբնակչության փոքր քանակը, ըստ ՀՀ ԱՆ կողմից հաստատված չափորոշիչների, թույլ չի տալիս իրականացնել նախատեսված բոլոր նեղ մասնագիտական և լաբորատոր-գործիքային հետազոտությունների ամբողջ ծավալը։

Ազգաբնակչության սպասարկման տարածքային առումով մոտ է «Թիվ 13 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն, որն ունի անհրաժեշտ բոլոր պայմանները մեծահասակ և մանկական ազգաբնակչությանը ՀՀ ԱՆ չափորոշիչներով սահմանված բժշկական օգնություն ցուցաբերելու համար, հագեցած է բարձր որակավորում ունեցող բժիշկ-մասնագետներով։

Ելնելով վերոգրյալից՝ ավագանու քննարկմանն ենք ներկայացնում «Թիվ 4 բուժսանմաս» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու հարցը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԹԻՎ 4 ԲՈՒԺՍԱՆՄԱՍ» ԵՎ «ԹԻՎ 13 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻԱՑՄԱՆ ՁԵՎՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Թիվ 4 բուժսանմաս» և «Թիվ 13 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունները միացման ձևով վերակազմակերպելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԹԻՎ 4 ԲՈՒԺՍԱՆՄԱՍ» ԵՎ «ԹԻՎ 13 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻԱՑՄԱՆ ՁԵՎՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Թիվ 4 բուժսանմաս» և «Թիվ 13 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունները միացման ձևով վերակազմակերպելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ